# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**ԲԴԽ-28-Ո-79**
**2019թ.**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 101-րդ հոդվածով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետով և Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի ԲԴԽ-40-Ո-110 որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի անցկացման վայրը և ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ**
**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**2019թ. մայիսի 6**
**ք. Երևան**

**Հավելված**
**Բարձրագույն դատական խորհրդի**
**2019թ. մայիսի 6-ի թիվ**
**ԲԴԽ-28-Ո-79 որոշման**

## Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի անցկացման վայրը և ժամանակացույցը

| **Մասնագիտացում** | **Հարցազրույցի անցկացման վայրը** | **Հարցազրույցի անցկացման օրը, ժամը** |
|---|---|---|
| Քաղաքացիական | Բարձրագույն դատական խորհուրդ<br>(հասցե՝ ք.Երևան, Կորյունի 17) | 22.05.2019թ., ժամը՝ 10:00<br>23.05.2019թ. ժամը՝ 10:00 |
| Քրեական | Բարձրագույն դատական խորհուրդ<br>(հասցե՝ ք.Երևան, Կորյունի 17) | 23.05.2019թ. ժամը՝ 14:00 |
| Վարչական | Բարձրագույն դատական խորհուրդ<br>(հասցե՝ ք.Երևան, Կորյունի 17) | 24.05.2019թ. ժամը՝ 10:00 |